Կարծիք

Անի Սպարտակի Նազարյանի «Սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի համահարաբերակցությունը» ԺԹ.00.03 – «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ատենախոսության վերաբերյալ

Անի Սպարտակի Նազարյանի «Սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի համահարաբերակցությունը» թեմայով ատենախոսությունը նվիրված է մեր ժամանակի համար արդիական և կարևոր մի հիմնախնդրի, որի ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները կարող են ընդլայնել անձի և սոցիալական հոգեբանության մեջ սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի հիմնահարցերին առնչվող տեսական և կիրառական գիտելիքների շրջանակը:

Սոցիալական կարծրատիպերը դիտարկելով անձնային աճի համատեքստում, ատենախոսը իր հետազոտության մեջ ցույց է տալիս սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի հակադարձ փոխկապակցվածությունը, համաձայն որի՝ անձնային աճի մակարդակի բարձրացմանը զուգընթաց նվազում է սոցիալական կարծրատիպերի արտահայտվածության մակարդակը:

Ատենախոսը գիտական գրականության և լայնածավալ փորձարարական հետազոտությունների հիման վրա ուսումնասիրության է ենթարկել անձնային աճի ազդեցությունը սոցիալական կարծրատիպերի շարժընթացի վրա և հանգել այն եզրակացության, որ սոցիալական կարծրատիպերի շարժընթացը պայմանավորված է անձնային աճով: Անձնային աճը հանդես է գալիս որպես սոցիալական կարծրատիպերի շարժընթացը պայմանավորող ներքին հոգեբանական գործոն:

Հոգեբանական գիտության տեսանկյունից ուշագրավ է նաև այն փաստը, որ անձնային աճի խթանման արդյունքում դիտվում է կարծրատիպերի արտահայտվածության մակարդակի նվազում կամ դրանց լիովին կազմալուծում: Ընդ որում անձնային աճի խթանման արդյունքում առավել ակնառու փոփոխությունների են ենթարկվում սեռադերային կարծրատիպերը, իսկ ամենանվազ փոփոխությունների՝ մասնագիտական կարծրատիպերը:

Ատենախոսության հեղինակն իրականացրել է հսկայածավալ աշխատանք: Անդրադառնալով Ու. Լիպմանի, Հ. Թեջֆելի, Գ. Օլպորտի, Կ. Ռոջերսի, Վ. Ֆրանկլի և այլոց ուսումնասիրություններին՝ նրան հաջողվել է գրագետ և համակարգված ձևով վերլուծության ենթարկել հիմնախնդրի տեսամեթոդաբանական հիմքերը: Հիմնվելով

հոգեբանական գիտական գրականության մեջ սոցիալական կարծրատիպերի վերաբերյալ գոյություն ունեցող բազմաթիվ բնորոշումների և մոտեցումների վրա, ատենախոսության հեղինակը «սոցիալական կարծրատիպերը բնութագրում է որպես ընդհանրացված, հարաբերականորեն կայուն, հուզականորեն հագեցած պատկերացումներ անհատական, խմբային և հասարակական գիտակցության մեջ, որոնք առաջ են գալիս սոցիալական փոխազդեցության արդյունքում և որոշում են մարդկանց կամ սոցիալական խմբերի վերաբերմունքը որոշակի սոցիալական առարկաների, երևույթների և իրադրությունների հանդեպ»:

Ատենախոսության հեղինակը իր աշխատանքում ներկայացնում է նաև անձնային աճի բնորոշումը, այն դիտարկելով «որպես անձի կողմից իր անձնային ներուժի և սոցիալապես նշանակալի անձնային հատկանիշների գիտակցման, ճանաչման և կատարելագործման գործընթաց, որը տեղի է ունենում որոշակի արտաքին և ներքին գործոնների ներգործությամբ և ապահովում է անձի լիարժեք կենսագործունեությունն ու ինքնիրացումը»:

Հատկանշական է, որ ատենախոսն իր աշխատանքում տալիս է նաև անձնային աճի բնութագրիչների բնորոշումը, որոնք են «բարձր ստեղծագործականությունը, ստեղծարարությունը, կոնգրուենտությունը, ինքնաճանաչման և ինքնազարգացման ձգտումը, արժեքային կողմնորոշումների հստակ գիտակցումը, սերը և հարգանքը սեփական անձի և այլոց հանդեպ, զգացմունքների, մտքերի անկեղծությունը, ինքնաբուխությունը, ինքնավստահությունը, ինքնուրույնությունը, հանդուրժողականության բարձր մակարդակը, ինքնադրսևորվելու, սեփական տաղանդը, կարողությունները, հմտությունները առավելագույնս դրսևորելու ունակությունը, կյանքի բոլոր ոլորտներում ներդաշնակ հարաբերություններ հաստատելու կարողությունը»:

Հետազոտության արժեքավոր կողմերից մեկը ատենախոսի կողմից մեծաքանակ գրականության օգտագործումն է, որը ճշգրտորեն ներկայացված է աշխատանքում՝ նպատակ ունենալով բացահայտել հիմնախնդրին առնչվող հարցերը:

Կարծում ենք ատենախոսին հաջողվել է ապացուցել առաջադրված վարկածը, և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթների համատեքստում ներկայացնել վերլուծություններ ու հիմնավորումներ:

Փորձարարական հետազոտություններն իրականացնելիս ատենախոսության հեղինակը կիրառել է հետազոտության նպատակին, խնդիրներին և վարկածին համարժեք մեթոդներ և մեթոդիկաներ, որոնց արդյունքների վերլուծության հուսալիությունն ու հավաստիությունը ստուգվել է մաթեմատիկական վիճակագրական մեթոդների միջոցով: Փորձարարական հետազոտություններն իրականացվել են 20-50 տարեկան ընդհանուր թվով 257 անձի շրջանակներում: Նման ,,տարիքային շեմի ընտրությունն, ըստ հեղինակի, հիմնված է Շ. Բյուլերի կողմից առաջ քաշված անձնային աճի տարիքային առանձնահատկությունների և կառուցվածքային բաղադրիչների տեսամեթոդաբանական մոտեցման վրա:

Կառուցվածքային տեսանկյունից ատենախոսությունը կազմված է գիտական պահանջներին համապատասխան: Ներածական մասում հիմնավորված է ներկայացված թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ձևակերպված են վարկածը, հիմնական նպատակը, խնդիրները, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության երեք գլուխները կազմում են տրամաբանորեն միմյանց հաջորդող և լրացնող ամբողջություն: Փորձարարական հետազոտության արդյունքում ստացված տվյալների հավաստիությունը հիմնավորվում է ընտրակազմի անհրաժեշտ քանակով և ներկայացուցչականությամբ, փորձարարական տվյալների քանակական և որակական վերլուծությունների համադրմամբ:

Աշխատանքը գրված է գրագետ, պահպանված է գիտական գրավոր խոսքին բնորոշ եզրութաբանությունը:

Ատենախոսն իր աշխատանքում ներկայացնում է նաև գործնական առաջարկներ, որի համաձայն հետազոտության արդյունքները կարող են կիրառվել անձնային աճի խթանմանն ուղղված հոգեբանական վարժանքների ծրագրերում, հոգեբանական խորհրդատվության, քոուչինգի և հոգեշտկողական աշխատանքներում, հասարակական կարծիքի ձևավորմանն ուղղված աշխատանքներում, քաղաքական և բիզնես իմիջի ձևավորմանը միտված աշխատանքներում, ինչպես նաև հասարակական կյանքի այլ ոլորտներում:

Ատենախոսության դրական կողմերին և արժանիքներին անդրադառնալուց հետո նշենք նաև որոշ դիտողություններ և առաջարկություններ, որոնց վերաբերյալ կարևորում ենք ատենախոսի կարծիքն ու մեկնաբանությունները:

1. Կարծում ենք հետազոտության խնդիրներից առաջին երկուսը կարելի էր միացնել և քննարկել միասնական կերպով:
2. Կարծում ենք, որ ոչ բոլոր մեթոդիկաներն են, որոնցից ստացված արդյունքները կարելի է համարել լիարժեք հավաստի, օգտագործված և աշխատանքի հավելվածում ներկայացրած էքսպրես հարցարանը " հանդուրժողականության ինդեքս" (էջ 146), առնականություն կանացիություն հարցարանը (Ս.բեմ. ձևափոխված Ի.Ս. Կլենցինայի կողմից), (էջ 149) ավելի շատ հանրամատչելի և չտեղայնացված են, այդ պատճառով էլ այդ հարցարաններից ստացված արդյունքները չեն կարող լինել ամբողջապես հավաստի, նմանատիպ մեթոդների կիրառությունները չեն կարող բացահայտել սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի իրական համահարաբերկացությունը:
3. Հետազոտության արդյունքները ավելի տեսանելի կարող էր լինել, եթե ուսումնասիրությունները կատարվեր իրական հետազոտվող և ստուգող (կոնտրոլ) խմբերի հետ: Այս դեպքում ավելի հստակ կերևար ստացված արդյունքների գործնական նշանակությունը:
4. Ցանկալի կլիներ թրենինգային աշխատանքներ իրականացնել ավելի ընդգրկուն: Ներկայացված հանդիպումների քանակն արդյո՞ք բավարար է հոգեբանական փոփոխությունների դինամիկան և համահարաբերակցությունը ներկայացնելու համար:
5. Հստակ չի տրված հետազոտվողների տարիքային, սեռային, կրթական տարբերությունները, չէ որ անձնային աճի դինամիկան տարբեր տարիքում տարբեր կերպ է ընթանում:
6. Ցանկալի կլիներ մանրամասն իմանալ թե ինչ մեթոդներով է՝ հայցորդը բացահայտել անձի սեռադերային, տարիքային, մասնագիտական կարծրատիպերի արտահայտվածության մակարդակը:
7. Չնայած նրան, որ օգտագործված գրականության ցանկում ներառված են հայ հոգեբանների աշխատանքները քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ, սակայն ատենախոսության շարադրանքում շատերի աշխատանքը չի քննարկվում և դրանք մնում են լոկ գրականության ցանկում՝ երբեմն նաև տեխնիկական անճշտություններով:

8. Աշխատանքում ատենախոսը փորձարարական հետազոտությունների է ենթարկել սոցիալական կարծրատիպերի 3 տեսակները՝ սեռադերային, տարիքային և մասնագիտական, կարծում ենք աշխատանքը կշահեր և ավելի ամբողջական կլիներ, եթե հետազոտվեր նաև էթնիկ կարծրատիպերը:

Եզրակացություն

Այդուհանդերձ, վերոնշյալ թերությունները չեն ազդում Անի Սպարտակի Նազարյանի «Սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի համահարաբերակցությունը» թեմայով ատենախոսության գիտականության վրա և չեն նսեմացնում ամբողջ աշխատանքի գիտական կշիռը: Կարող ենք նշել, որ աշխատանքի արդյունքներն ունեն տեսական և կիրառական մեծ նշանակություն:

Անի Սպարտակի Նազարյանի «Սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի համահարաբերակցությունը» վերնագրով ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն, գիտական բարձր մակարդակով գրված աշխատանք է: Աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին: Աշխատանքի հեղինակը՝ Անի Նազարյանը, արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական հոգեբանական գիտությունների դոկտոր,

ընդդիմախոս՝ պրոֆեսոր Սեդրակ Աղասու Սեդրակյան

Ս. Ա. Սեդրակյանի ստորագրությունը հաստատում եմ,

գիտ. քարտուղար՝

բժ. գիտ. դոկտ. Ժ. Ռ. Բաբայան

22.05.2023թ.